

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**2017թ. I եռամսյակի ընթացքում ԼՂՀ արդարադատության նախարարության աշխատակազմի
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության գործունեության վերաբերյալ**

2017թ. I եռամսյակի ընթացքում իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից որոշակի աշխատանք է կատարվել համակարգին վերապահված խնդիրների իրականացման ուղղությամբ:

Այսպես, հաշվետու ժամանակահատվածում պետական գրանցման են ենթարկվել 28 առևտրային և 6 ոչ առևտրային տիպի իրավաբանական անձ, 67-ի հիմնադիր փաստաթղթերի փոփոխությունները սահմանված կարգով գրանցվել են (ստացել են ընթացիկ գրանցում), իսկ 3-ի գործունեությունը դադարեցվել է:

1 իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանում ենթարկվել է պետական հաշվառման, 1-ը՝ ընթացիկ պետական հաշվառման, 1-ը՝ հանվել հաշվառումից:

1 հիմնարկ ևս ենթարկվել է ընթացիկ պետական հաշվառման:

Պետական հաշվառման են ենթարկվել նաև 250 անհատ ձեռնարկատեր, 22-ը՝ ենթարկվել ընթացիկ պետական հաշվառման, իսկ 7-ի գործունեությունը դադարեցվել է:

Ըստ շրջանների գրանցման գործընթացի իրավիճակը բնութագրվում է հետևյալ կերպ.

անվանում	իրավաբանական անձ				իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանում և հիմնարկ				անհատ ձեռնարկատեր				ընդամենը	պետ. տուրք (հազ. դրամ)
	սկզբ	վեր ազ.	ընթ.	լուծ. (դադար.)	սկզբ	վեր ահ.	ընթ.	լուծ	սկզբ.	վեր ահ	ընթ.	գործ. դադար		
<i>Կենտրոնական մարմին</i>	7		9	1դ			1						18	133
<i>Ստեփանակերտ</i>	19		45	1			1	1	141		17	4	229	1042,5
<i>Ասկերան</i>	2		3						24		1	3	33	124,5
<i>Հաղրուք</i>			2						19				21	69
<i>Մարտակերտ</i>	2		1						21				24	103
<i>Մարտունի</i>			5						29		1		35	116,5
<i>Շուշի</i>	3			1					11		2		17	87
<i>Մաշաթաղ</i>	1		2		1				5		1		10	55,5
Ընդամենը	34		67	3	1		2	1	250		22	7	387	1731

Պետական միասնական գրանցամատյանից տրվել է 110 տեղեկանք:

Վերը նշված գրանցումների դիմաց գանձվել է 1 841 000 դրամ պետական տուրք:

Գործակալության կողմից մատուցած վճարովի ծառայությունների արդյունքում I եռամսյակում արտաբյուջե է մտցվել 211 000 դրամ:

Կազմակերպվել են նաև քաղաքացիների ընդունելություններ, նրանց բազմաթիվ հարցերին տրվել սպառիչ պատասխաններ:

Գործակալության կենտրոնական մարմնի կողմից սիստեմատիկ հսկողություն է իրականացվել պետական ռեգիստրի տարածքային բաժինների նկատմամբ, նրանց տրվել են ոլորտը կարգավորող օրենսդրության պարզաբանումներ և մեթոդական ցուցումներ: